

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռուբեն Հովհաննեսյան

**ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023**

YEREVAN STATE UNIVERSITY

Rouben A. Hovhannesian

**EXPLANATORY DICTIONARY
OF EVIDENCE-BASED
MEDICINE TERMS**

**YEREVAN
YSU PUBLISHING HOUSE
2023**

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Ованесян Рубен Андреевич

**ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ ТЕРМИНОВ
ДОКАЗАТЕЛЬНОЙ МЕДИЦИНЫ**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2023**

ՀՏԴ 61:81'374.3=19=161.1=111

ԳՄԴ 5+81.51-4+81.411.2-4+81.432.1-4

Հ 853

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Հովհաննեսյան Ռուբեն

Հ 853 Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարան / Ռ. Հովհաննեսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 72 էջ:

Ապացուցողական բժշկության (ԱԲ) տերմինների բացատրական բառարանը ներառում է 163 եզրույթ: Հայերեն բառահոդվածներից հետո առանձին բառացանկերով տրվում են ռուսերեն - հայերեն, անգլերեն - հայերեն համարժեքները՝ հեշտացնելու համար օտար բառերի հայերեն տարբերակը գտնելու գործը: Բառարանը նախատեսված է կլինիկական համաճարակաբանության և ԱԲ բնագավառի մասնագետների, կլինիկական փորձարկումներ կատարող բժիշկ-հետազոտողների, ինչպես նաև բժշկական և դեղագործական համալսարանների ուսանողների, կլինիկական օրդինատորների և ասպիրանտների համար:

Rouben A. Hovhannesyan

The dictionary of terms of evidence-based medicine (EBM) includes 163 articles-terms. Each article is presented in three languages; accordingly, the dictionary includes three sections: English-Russian-Armenian, Russian-Armenian-English and Armenian-Russian-English. The dictionary is intended for specialists in the field of clinical epidemiology and EBM, medical researchers conducting clinical trials, as well as for students of medical and pharmaceutical universities, clinical residents and graduate students.

Ованесян Рубен Андреевич

Толковый словарь терминов доказательной медицины (ДМ) включает 163 статьей-терминов. Каждая статья представлена на трех языках; соответственно этому, словарь включает три раздела: англо-русско-армянский, русско-армяно-английский и армяно-русско-английский. Словарь предназначен для специалистов в области клинической эпидемиологии и доказательной медицины, врачей-исследователей, проводящих клинические исследования, а также для студентов медицинских и фармацевтических вузов, клинических ординаторов и аспирантов.

ՀՏԴ 61:81'374.3=19=161.1=111

ԳՄԴ 5+81.51-4+81.411.2-4+81.432.1-4

ISBN 978-5-8084-2603-0

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426030>

© ԵՊՀ հրատ., 2023

© Հովհաննեսյան Ռուբեն, 2023

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Անվանի բժիշկ, գիտնական, պրոֆեսոր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանը ծնվել է 1951 թ. Երևանում: Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետն ավարտելուց հետո (1974 թ.), պրակտիկ բժշկությանը զուգահեռ, նա զբաղվել է գիտական գործունեությամբ: 1980 թ. ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Վիրաբուժության համամիութենական գիտական կենտրոնի Երևանի մասնաճյուղում հիմնել և ղեկավարել է Հայաստանում առաջին միկրոցիրկուլյացիայի լաբորատորիան: Այնուհետև՝ 1984-ից մինչև 1993 թ., աշխատել է այդ մասնաճյուղի գլխավոր բժիշկ: 1993 թ. աշխատանքի անցնելով ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտում՝ Ռ. Հովհաննեսյանի նախաձեռնությամբ այնտեղ ստեղծվել է համալսարանական կլինիկա, որը ղեկավարել է անձամբ մինչև 1997 թ.: Հաջորդ կարևոր ներդրումը ինստիտուտում կլինիկական պաթոֆիզիոլոգիայի ամբիոնի հիմնումն էր (1998 թ.), որը ղեկավարել է մինչև 2011 թ.:

2015 թ.-ից նա աշխատել է ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեղագիտության բաժնում, այնուհետև Ֆարմացիայի ինստիտուտում՝ դասավանդելով մասնագիտական մի շարք առարկաներ: 2017 թ.-ից մինչև կյանքի վերջը (2021 թ.) ԵՊՀ-ի ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչն էր:

Լայն է Ռ. Հովհաննեսյանի գիտական հետաքրքրությունների ու գործունեության շրջանակը: Հեղինակ է շուրջ 200 գիտական աշխատությունների, 4 արտոնագրված գյուտերի և 14 նորարական առաջարկությունների:

Հեղինակել է «Доказательная медицина в Армении: вчера, сегодня, завтра» և «Синдром эмоционального выгорания у врачей» մենագրությունները, «Պաթոլոգիական ֆիզիոլոգիա» դասագրքի գլխավոր խմբագիրն է, եղել է «Հայ անվանի բժիշկներ» ու «Имени Микаеляна» գրքերի պատասխանատու խմբագիրը, «Բժշկական բարոյագիտության, բժշկական կրթության և բժշկագիտության արդի տեսակետները» ժողովածուի խմբագիրը, «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահը:

Անդամակցել է Պաթոֆիզիոլոգների համաշխարհային ընկերությանը (International Society for Pathophysiology), Բժշկական ամսագրերի խմբագիրների համաշխարհային միությանը (World Association of Medical Editors), Կոկրենյան համագործակցությանը (Cochrane Collaboration):

Գիտական հետազոտությունների բնագավառն է միկրոցիրկուլյացիայի և արյան ռեոլոգիայի հետազոտությունները անհետաձգելի ու շոկային վիճակների, երկարատև ճնշման համախտանիշի, արյան էքստրակորպորալ շրջանառության, ինսուլտների և գլխուղեղային վնասվածքների ժամանակ:

Վերջին 10 տարում զբաղվել է նաև Հայաստանի առողջապահության համակարգում ապացուցողական բժշկության ներդրման հիմնախնդիրներով:

2002 թ. հիմնել է «Բժշկական սեղմագրերի հայկական հանդես» պարբերական տարեգիրքը՝ լինելով հանդեսի գլխավոր խմբագիրը:

2012 և 2015 թթ. նրա ղեկավարությամբ Երևանում անցկացվել են երկու միջազգային գիտաժողովներ՝ «Ապացուցողական բժշկությունը Հայաստանում՝ հորինվածք, թե՞ իրականություն» և «Ապացուցողական բժշկություն. տեսությունից պրակտիկա» վերնագրերով:

2016-ից Ռ. Հովհաննեսյանի ղեկավարությամբ Երևանում անցկացվել են քննարկումներ «Հայրենական բժշկական գիտության, կրթության և գործնական առողջապահության արդի հարցերը» ու «Դեղագիտական հոգածության կազմակերպման կարգավիճակը Հայաստանում» թեմաներով:

Ծննդյան 70-ամյակի առթիվ պարգևատրվել է ԵՊՀ արծաթե մեդալով:

Սույն բառարանը վկայում է այն մասին, որ Ռ. Հովհաննեսյանը նախանձախնդիր էր բժշկագիտության ոլորտում հայեցի տերմիններ ստեղծելու հարցում:

Ցավոք, հեղինակն աշխատանքը հրատարակված չտեսավ: Պետք է նշել, որ բառարանի ստեղծման գործում մեծ ներդրում ունի ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի ազգային գիտաբժշկական գրադարանի գլխավոր գրադարանավար Աննա Շիրինյանը, ում ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ տպագրության ներկայացնել այն:

ԵՊՀ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա

Ադիտիվ մոդել
Additive model
Аддитивная модель

Վիճակագրական մոդել, որում մի քանի գործոնների ընդհանուր արդյունքը հավասար է դրանցից յուրաքանչյուրի արդյունքների գումարին: Օրինակ, եթե մեկ գործոնը ավելացնում է ռիսկը a տոկոսով, իսկ մյուս գործոնը՝ b տոկոսով, ապա երկու գործոնների ընդհանուր արդյունքը հավասար է $(a + b)$ տոկոսի:

Ազատության աստիճաններ
Degrees of freedom
Степени свободы

Անկախ համեմատությունների քանակ, որոնք կարելի է անցկացնել ընտրանքի տարրերի միջև: Նկատի է առնվում ընտրովի բաշխման մեջ անկախ ներդրումների թիվը (այնպիսին, ինչպիսին է խի-քառակուսին): Ազատության աստիճանների թիվը կարելի է հաշվարկել կապակցման աղյուսակով հետևյալ կերպ՝ բազմապատկել « -1 » տողի կատեգորիաների թիվը « -1 » սյունակի կատեգորիաների թվով: Օրինակ, եթե 2×2 աղյուսակը կազմված է երկու խմբերի համեմատության համար այնպիսի դիտարկումից ելքով, ինչպիսին մահն է, ապա այդ դեպքում կստացվի ազատության մեկ աստիճան:

Աղտոտում
Contamination
Загрязнение

Վերահսկվող կլինիկական փորձարկումների ժամանակ այդ տերմինը օգտագործում են *վերահսկիչ խմբի* անձանց շրջանում՝ չկանխամտածված կերպով միջամտություն կիրառելը կամ *միջամտության խմբի անձանց շրջանում միջամտություն* չկիրառելը նշելու համար:

Անցանկալի արդյունք
(ազդեցություն)
Adverse effect
Неблагоприятный эффект (воздействие)

Անցանկալի իրադարձություն (հետևանք), որի դեպքում հմարավոր է դառնում դեղի՝ *միջամտության* և իրադարձության միջև պատճառահետևանքային կապի առաջացումը: «Անցանկալի արդյունք» տերմինը վերաբերում է բոլոր *միջամտություններին*, իսկ «անցանկալի դեղորայքային արդյունք» տերմինը օգտագործվում է միայն դեղերի դեպքում:

Անցանկալի երևույթ
Adverse event
Неблагоприятное
явление

Պացիենտի կամ կլինիկական փորձարկման մասնակցի, որին նշանակվել է դեղ (միջամտություն), առողջական վիճակի անցանկալի փոփոխություն՝ անկախ այն օգտագործելու պատճառով առաջացած հետևանքից:

Անվտանգություն (միջամտության)
Safety
Безопасность
(вмешательства)

Անվտանգության խախտումներին են դասվում բուժման խիստ անբարենպաստ արդյունքները, որոնք սպառնում են կյանքին, պահանջում են հոսպիտալացում կամ երկարացում են դրա ժամկետը, պատճառ դառնում մշտական հաշմանդամության կամ առաջացնում են արատներ: Կարող են լինել նաև անուղղակի անցանկալի հետևանքներ, ինչպիսիք են ճանապարհատրանսպորտային պատահարները, բռնությունները և տրամադրության սթրեսային փոփոխությունները:

Անկախ փոփոխական
Independent variable
Независимая
переменная

Ներգործություն, ռիսկի գործոն կամ այլ բնութագիր, որը ենթադրաբար ազդում է *կախյալ փոփոխականի* վրա: Կլինիկական փորձարկումներում արդյունքը (ելքը) *կախյալ փոփոխական* է, իսկ բուժման տեսակը՝ անկախ փոփոխական: Կարգավորված վերլուծության մեջ հիվանդի բնութագրերը ներառված են որպես լրացուցիչ անկախ փոփոխականներ: Տե՛ս նաև *Կախյալ փոփոխական*:

Անհամասեռություն
Heterogeneity
Неоднородность

Համակարգված ամփոփ տեսությունների անհամասեռություն ասելով հասկանում են հետազոտությունների արդյունքների գնահատման տարբերությունները կամ փոփոխականությունը: Երբեմն տարբերակում են «վիճակագրական անհամասեռություն» (նկարագրված արդյունքների), «մեթոդաբանական անհամասեռություն» (հետազոտությունների տեսակների) և «կլինիկական անհամասեռություն» (հետազոտությունների միջև՝ ըստ մասնակիցների հիմնական բնութագրերի, միջամտությունների կամ ելքերի գնահատականների) հասկացությունները: Անհամասեռու-

քյան վիճակագրական չափանիշները օգտագործում են որոշելու համար, թե որքանով են դիտարկվող հետազոտությունների արդյունքների տարբերությունները (արդյունքների մեծությունները) մեծ պատահականորեն առաջացող տարբերություններից: Տե՛ս նաև *Համասեռություն*:

«Անտառային» գծապատկեր
Forest plot
«Лесной» график

Մետավերլուծության մեջ ներառված յուրաքանչյուր հետազոտության առանձին արդյունքների գծապատկեր: Գծապատկերը նաև թույլ է տալիս նկատել հետազոտության արդյունքների *անհամասեռությունը*: Հետազոտությունների արդյունքները ներկայացվում են քառակուսիների տեսքով, որոնք կենտրոնացած են ըստ յուրաքանչյուր հետազոտության կետային գնահատման: Քառակուսիների մեջտեղից անցնում է հորիզոնական գիծ՝ յուրաքանչյուր արդյունքի 95% *վարահեղիության միջակայքը* ցույց տալու համար: *Մեխրավերլուծության* ընդհանուր գնահատականը ներկայացված է շեղանկյունաձև: Շեղանկյունու կենտրոնը համակցված կետի գնահատականն է, իսկ նրա հորիզոնական գազաթնակետերը՝ *վարահեղիության միջակայքը*:

Առաջահայաց հետազոտություն
Prospective study
Проспективное исследование

Առողջության հետ կապված *միջամտությունների* արդյունքների հետազոտություն, որի մասնակիցներին բաշխում են խմբերի՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կիրականացվեն ուսումնասիրվող *միջամտությունները մինչև ելքի* առաջացումը: Պատահական *բաշխմամբ վերահսկվող փորձարկումները* միշտ առաջահայաց հետազոտություններ են, իսկ *դեպ-վերահսկում* հետազոտությունները և *խմբային* հետազոտությունները կարող են լինել թե՛ *առաջահայաց* և թե՛ *հետահայաց*: Տե՛ս նաև *Հետահայաց հետազոտություն*:

Առաջին տիպի սխալ
Type I error
Ошибка I-го типа

Եզրակացություն այն մասին, որ բուժումն արդյունավետ է, երբ իրականում այն անարդյունավետ է: Առաջին տիպի սխալի ռիսկը հաճախ ան-

վանվում է ալֆա սխալ:

Առաջին տիպի սխալը նշանակում է *գրոյական վարկածը* մերժելու հնարավորություն, երբ այն իրականում ճիշտ է: Տե՛ս նաև *Կեղծ դրական արդյունք*:

**Առաջնային
հետազոտություն
Primary study
Первичное
исследование**

Բնօրինակ հետազոտություն, որի արդյունքում ստացվում են որոշ տվյալներ: «Առաջնային հետազոտություն» տերմինը երբեմն օգտագործվում է այն տարբերելու համար «երկրորդային հետազոտությունից» (նախկինում հաճաքագրված տվյալների վերլուծություն), մետավերլուծությունից և հետազոտությունները համախմբելու այլ մեթոդներից (օրինակ՝ տնտեսական վերլուծություն և որոշումների կայացման վերլուծություն):

**Ասոցիացիա (փոխկա-
պակցվածություն)
Association
Ассоциация
(взаимосвязь)**

Երկու բնութագրերի միջև այնպիսի փոխկապակցվածությունն է, երբ դրանցից մեկը փոփոխելիս, մյուսը փոխվում է կանխատեսելի ձևով: Օրինակ՝ ծխելու և թոքերի քաղցկեղի միջև առկա է դրական վիճակագրական կապ: Դրական ասոցիացիայի դեպքում մեկ արժեքի մեծացումը ուղեկցվում է մյուսի աճով (ինչպես ծխելը և թոքերի քաղցկեղը): Բացասական ասոցիացիայի դեպքում մեկ արժեքի աճը ուղեկցվում է մյուսի անկմամբ: Ասոցիացիան դեռևս չի վկայում պատճառահետևանքային կապի առկայության մասին:

**Արդյունավետություն
(կատարյալ
արդյունավետություն)
Efficacy
Эффективность
(идеальная
эффективность)**

Աստիճան, որում տվյալ *միջամտությունն* իդեալական պայմաններում տալիս է դրական արդյունք: Կլինիկական փորձարկումները, որոնք զնահատում են արդյունավետությունը, երբեմն անվանում են բացատրական փորձարկումներ: Տե՛ս նաև *Բացարարական փորձարկում*:

**Արդյունքի զնահատում
(բուժման
արդյունավետություն)**

Բժշկական օգնության *արդյունավետության* հետազոտություններում *միջամտության* և *եղքի* միջև դիտարկվող փոխհարաբերությունը արտահայտ-

Estimate of effect
(treatment effect)

Оценка эффекта
(эффект лечения)

վում է որպես, օրինակ, *հիվանդների թիվ, որոնց հարկավոր է բուժել որոշակի բարենպաստ արդյունքի հասնելու համար, կամ՝ շանտերի հարաբերություն, հարաբերական ռիսկ*:

Արդյունքի մեծություն
Effect size
Величина эффекта

1. Ընդհանուր տերմին, որը կիրառվում է հետազոտության մեջ արդյունքի գնահատման համար:
2. Արդյունքի այնպիսի ցուցանիշ, որը կիրառվում է *շարունակական տվյալների* համար, եթե *եկը* գնահատելիս օգտագործում են տարբեր սանդղակներ (օրինակ՝ ցավը գնահատելիս): Սովորաբար սահմանվում է, որպես *միջամտության* և *վերահսկիչ* խմբերում *միջինների* տարբերություն՝ բաժանած *վերահսկիչ* կամ էլ երկու խմբերում *սրահնդարյր շեղման* վրա:

Արձանագրություն
Protocol
Протокол

Գործողությունների պլան կամ հաջորդականություն, որն անհրաժեշտ է պահպանել հետազոտություն կատարելու ընթացքում: Համակարգված ամփոփ տեսության արձանագրությունը պետք է պարունակի հիմնավորումը, նպատակը և մեթոդները, որոնք կօգտագործվեն հետազոտությունների որոնման, ընտրության և քննադատական գնահատման, ինչպես նաև ամփոփ տեսության մեջ ընդգրկված հետազոտությունների տվյալների վերլուծության և հավաքագրման համար:

Արտաքին վավերականություն (ընդհանրացում, կիրառելիություն)
External validity
Внешняя валидность
(обобщаемость, применимость)

Աստիճան, որում տվյալ դիտարկման արդյունքները կիրառելի են այլ հանգամանքներում, մասնավորապես դրանք կարելի է տարածել ամենօրյա բժշկական գործունեության մեջ: Օրինակ՝ տարեց հիվանդների փորձարկումների *գերակշռություն* արդյունքները չեն կարող տարածվել երեխաների նկատմամբ: Տե՛ս նաև *Ներքին վավերականություն*:

Բ

**Բազմակենտրոն
փորձարկում
Multicentre trial
Многоцентровое
испытание**

Փորձարկում, որն անցկացվել է աշխարհագրական մի քանի տարածքներում: Նման փորձարկումները երբեմն անցկացվում են ոչ թե մեկ, այլ մի քանի համագործակցող հաստատություններում, հատկապես, երբ պահանջվում են մեծ թվով մասնակիցներ:

**Բաց կլինիկական փորձարկում
Open clinical trial
Открытое
клиническое
испытание**

1. *Կլինիկական փորձարկում*, որի ընթացքում հետազոտողը, ինչպես նաև հիվանդը տեղյակ են, թե ինչպիսի միջամտություն է իրականացվում յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ (այսինքն՝ առանց *կույր մեթոդի* օգտագործման): Ընդ որում, հիվանդների *պատահական բաշխումը միջամտության* որևէ խմբում կարող է կատարվել կամ չկատարվել:

2. *Կլինիկական փորձարկում*, որի ընթացքում հետազոտողը ինքն է որոշում՝ ինչպիսի *միջամտություն* նշանակի յուրաքանչյուր հիվանդին (խմբերում մասնակիցների *ոչ պատահական բաշխում*):

3. *Կլինիկական փորձարկում*, որի ընթացքում օգտագործվում է *բաց հաջորդական դիզայն*:

**Բացասական արդյունքի կանխատեսվող արժեք (ԲԱԿԱ)
Negative predictive value (NPV)
Прогностическая
ценность
отрицательного
результата (ПЦОР)**

Սրբինինգ/ախտորոշիչ թեստերի արժեքի չափ: ԲԱԿԱ-ը փորձարկման բացասական արդյունք ունեցող մարդկանց համախումբ է, ովքեր չունեն հիվանդություն. այն կարող է մեկնաբանվել որպես փորձարկման բացասական արդյունքի ճշտության հավանականություն: Ավելի պարզ ասած՝ թեստի բացասական արդյունքի դեպքում հիվանդության բացակայության հավանականությունն է: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ. $ԲԱԿԱ = \text{թեստի բացասական արդյունքով անձանց թիվը, որ չունեն հիվանդություն} / \text{թեստի բացասական արդյունքով բոլոր անձանց թիվը}$: Տե՛ս նաև *Դրական արդյունքի կանխատեսվող արժեք*:

Բացասական արդյունքով հետազոտություն

Հետազոտություն, որտեղ չկա *վիճակագրորեն* նշանակալի (դրական) արդյունք, որը կվկայի

Negative study
Исследование
со отрицательным
результатом

ուսումնասիրվող *միջամտության* օգտակար արդյունքի մասին: Տե՛ս նաև *Դրական արդյունքով հեղափոխություն*:

Բացատրական
փորձարկում
Explanatory trial
Пояснительное
испытание

Փորձարկում, որի նպատակն է վերահսկել առողջապահության քաղաքականությունն իդեալական պայմաններում, երբ պացիենտները կարող են օգտվել բուժման սահմանված բոլոր եղանակներից, և բուժման այլ մեթոդների օգտագործումը կարող է վերահսկվել կամ սահմանափակվել: Տե՛ս նաև *Պրագմատիկ փորձարկում*:

Բայեսի թեորեմ
Bayes' theorem
Теорема Байеса

Հավանականությունների թեորեմ, որը թույլ է տալիս սահմանել հիվանդության առկայության *հավանականությունը* որոշակի բնութագրով անձանց խմբում (օրինակ՝ այն անձանց, որոնց նկատմամբ կատարվել է ուսումնասիրվող *միջամտությունը* կամ որոշակի արդյունքներով խիստորոշիչ քննությունը) այդ հիվանդության առաջացման միջին հաճախականության հիման վրա (a priori *հավանականություն*) և տվյալ բնութագրի բացահայտման *հավանականությունը* այդ հիվանդությամբ և առանց դրա անձանց շրջանում:

Բաշխման քողարկում
Concealment of
allocation
Соккрытие
распределения

Պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներին ներգրավված հետազոտության մասնակիցներին խմբերի բաժանման կարգը կանխատեսելու հնարավորությունը բացառելու մեթոդ: Պետք չէ շփոթել *կույր մեթոդի* հետ: Մասնակիցներին ըստ խմբերի բաշխելու գործընթացը պետք է բացառի հետազոտությունը իրականացնող անձի որևէ ազդեցություն, իսկ *պատահական բաշխումը* պետք է ղեկավարեն այն անձինք, ովքեր ներգրավված չեն հետազոտության մասնակիցների հավաքագրման գործընթացում: Բողարկված բաշխման մեթոդներ են համարվում պատահական բաշխման կենտրոնացված ծրագրերը, տեսքով միանման դեղահաբերի հաջորդական նշա-

նակումը արտաքնապես միատեսակ համարակալված սրվակներից, համակարգչային ներքին համակարգի կիրառումը, հաջորդաբար համարակալված, անթափանց, կնքված ծրարների օգտագործումը: Բաշխման քողարկման մեթոդը օգտագործվում է հետազոտության *որակը* գնահատելու համար:

Բինոմիալ բաշխում
Binomial distribution
Биномиальное распределение

Հայտնի հատկություններով վիճակագրական բաշխում, որը նկարագրում է իրադարձության դեպքերի քանակը դիտարկումների շարքում: *Վերահսկվող փորձարկումների վերահսկման խմբում* մահվան դեպքերի թիվը ենթարկվում է բինոմիալ բաշխման: Բինոմիալ բաշխումը *դիփուզիոնիկ տվյալների* վերլուծության հիմք է:

Պ

Գործունեություն (իրական արդյունավետություն)
Effectiveness
Эффективность
 (действенность)

Աստիճան, որի դեպքում տվյալ *միջամտությունը* սովորական պայմաններում կիրառելիս թողնում է այն ազդեցությունը, ինչը սպասվում էր: Կլինիկական փորձարկումները, որոնք գնահատում են գործունեությունը, երբեմն կոչվում են պրագմատիկ կամ կառավարման փորձարկումներ: Տե՛ս նաև *Պրագմատիկ փորձարկում*:

Պ

Դեպք-վերահսկում
հետազոտություն
Case-control study
Исследование случай-контроль

Հետազոտություն, որտեղ համեմատվում են երկու խմբեր, որոնցից մեկում ընդգրկված է որոշակի ախտահարմամբ կամ *ելքով* («դեպք»), իսկ մյուսում առանց այդ ախտահարման կամ ելքի առկայության («*վերահսկում*») հիվանդներ: Հատկանիշի (*միջամտության, ներգործության կամ ռիսկի գործոնի*) և ուսումնասիրվող ելքի հարաբերակցությունը գնահատում են «դեպք» և «*վերահսկում*» խմբերում հատկանիշի մակարդակի և հաճախականության համեմատությամբ: Դեպք-

**Դեպքերի շարքի
նկարագրություն
Case study
Описание серии
случаев**

վերահսկում հետազոտությունները կարող են լինել թե՛ *հերահայաց* և թե՛ *առաջահայաց*: Տե՛ս նաև *Վերահսկում*:

Հետազոտություն, որը կատարվում է առանց *վերահսկիչ խմբի*՝ միևնույն *միջամտությունը* ստացող մի խումբ պացիենտների վերաբերյալ դիտարկումների նկարագրությամբ:

**Դեպքի նկարագրություն
Case series
Описание случая**

Մեկ պացիենտի վերաբերյալ դիտարկումների նկարագրություն:

**Դրական արդյունքի
կանխատեսվող արժեք
(ԴԱԿԱ)
Positive predictive value
(PPV)
Прогностическая
ценность
положительного
результата (ПЦПР)**

Սքրինինգ/ախտորոշիչ թեստերի արժեքի չափ: ԴԱԿԱ-ն փորձարկման դրական արդյունք ունեցող մարդկանց համախումբ է, ովքեր ունեն հիվանդություն. այն կարող է մեկնաբանվել որպես փորձարկման դրական արդյունքի ճշմարտության *հավանականություն*: Ավելի պարզ ասած՝ սա թեստի դրական արդյունքի դեպքում հիվանդության առկայության *հավանականությունն* է: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ. ԴԱԿԱ = թեստի դրական արդյունքով անձանց թիվը, որ ունեն հիվանդություն / թեստի դրական արդյունքով բոլոր անձանց թիվը: Տե՛ս նաև *Բացասական արդյունքի կանխատեսվող արժեք*:

**Դրական արդյունքով
հետազոտություն
Positive study
Исследование с
положительным
результатом**

Հետազոտություն, որի արդյունքները վկայում են ուսումնասիրվող *միջամտության* օգտակարության մասին: Տերմինը կարող է շփոթություն առաջացնել, քանի որ.

1. այն կարող է վերաբերել ինչպես *վիճակագրական նշանակալիությանը*, այնպես էլ ազդեցության ուղղությանը,
2. հետազոտությունները հաճախ ունենում են բազմաթիվ արդյունքներ,
3. հետազոտությունները որպես բացասական

	կամ դրական դասակարգելու չափանիշները միշտ չէ, որ հստակ են, ռիսկը կամ <i>անբարենպաստ արդյունքները</i> ուսումնասիրելիս, «դրական» հետազոտությունները վնասակար ազդեցություն են թողնում: Տե՛ս նաև <i>Բացասական արդյունքով հետազոտություն</i> :
Դեղաչափից կախյալ արդյունք Dose dependent Дозозависимый эффект	Դեղերի հանդեպ ռեակցիա, որը կարող է կապված լինել դրա քանակի (դեղաչափի) հետ: Երբեմն փորձարկումներն անցկացվում են միևնույն դեղի տարբեր դեղաչափերի ազդեցությունը ստուգելու նպատակով, ինչը կարող է անհրաժեշտ լինել դեղի օգտակար և <i>անցանկալի արդյունքները</i> ստուգելու համար:
Դիսպերսիա Washout period Дисперсия	Մի շարք դիտարկումների ժամանակ փոփոխականությունն արտահայտող չափ, որը սահմանվում է որպես <i>միջինից</i> շեղումների քառակուսիների գումար՝ բաժանած <i>ազատության աստիճանների</i> թվին՝ հանած մեկ:
Դիտարկային հետազոտություն Observational study Обсервационное исследование	Հետազոտություն, որում համեմատում են մեկ բնութագրի տարբերությունները կամ փոփոխությունները (օրինակ՝ ստացե՞լ են արդյոք հիվանդները ուսումնասիրվող <i>միջամտությունը</i> , թե՞ ոչ) մյուսի փոփոխությունների կամ տարբերությունների հետ (օրինակ՝ մահացե՞լ են հիվանդները, թե՞ ոչ) առանց հիվանդներին նախապես խմբերում բաշխելու: Այդպիսի հետազոտություններում մասնակիցների <i>հավաքագրման հետ կապված համակարգային սխալի</i> ի հայտ գալու <i>ռիսկը</i> ավելի մեծ է, քան նմանատիպ <i>փորձարկումներում</i> (պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներում):
Դիխոտոմիկ տվյալներ (բինարային տվյալներ) Dichotomous data Дихотомические	Դիտարկումներ երկու հնարավոր կատեգորիաներով, ինչպիսիք են՝ մահացած/ողջ, ծխող/չծխող, կա/չկա: Կոչվում են նաև երկուական տվյալներ: Երբեմն <i>շարունակական</i> կամ <i>հաջոր-</i>

данные (бинарные
данные)

դական տվյալները պարզեցվում են դիխոտոմիկ տվյալների: Տե՛ս նաև *Հաջորդական տվյալներ*, *Կատեգորիալ տվյալներ*, *Շարունակական տվյալներ*:

Ե

Ելքեր
Outcome
Исходы

Միջամտությունից հետո հիվանդների կլինիկական և ֆունկցիոնալ վիճակի բնութագրերը, որոնք օգտագործվում են միջամտության *արդյունավետությունը* գնահատելու համար:

Եռակի կույր մեթոդ
(եռակի քողարկում)
Triple blind (triple
masked)
Тройной слепой метод
(тройное маскирование)

Տերմինը օգտագործում են՝ ցույց տալու համար, որ փորձարկվողների՝ համեմատվող խմբերին պատկանելության մասին տեղեկատվությունը զաղտնի է պահվում թե՛ տվյալները վերլուծող վիճակագրից, թե՛ փորձարկվողներից և հետազոտողներից (մարդկանցից, որոնք գնահատում են ելքը): Տե՛ս նաև *Կույր մեթոդ*, *Կրկնակի կույր մեթոդ*, *Պարզ կույր մեթոդ*:

**Երկրորդային
հետազոտություն**
Secondary study
**Вторичное
исследование**

Սա, ըստ էության, հետազոտությունների հետազոտություն է, այսինքն՝ առանձին հետազոտությունների ամփոփում (որոնցից յուրաքանչյուրը առաջնային հետազոտություն է): Համակարգված ամփոփ տեսությունը երկրորդային հետազոտություն է:

Երկկողմանի թեստ
Two-tailed test
Двусторонний тест

Վարկածի ստուգում, որում արժեքները, որոնց համար մենք կարող ենք մերժել *զրոյական վարկածը*, տեղակայված են *հավանականությունների* բաշխման երկու «ծայրերում»: Վարկածի ստուգումը, թե մի բուժումը ավելի լավ է կամ ավելի վատ, քան մյուսը (և ոչ թե միայն ստուգումը, որ մի բուժումը ավելի լավ է, քան մյուսը), երկկողմանի թեստ է:

Երկրորդ տիպի սխալ
Type II error
Ошибка II-го типа

Եզրակացություն այն մասին, որ բուժումն անարդյունավետ է, երբ այն իրականում արդյունավետ է: Երկրորդ տիպի սխալի ռիսկը հաճախ ան-

վանվում է բետտա սխալ: Երկրորդ տիպի սխալը նշանակում է *զրոյական վարկածը* ընդունելու հնարավորություն, երբ այն իրականում կեղծ է: Տե՛ս նաև *Կեղծ բացասական արդյունք*:

Չ

**Չգայունության
վերլուծություն**
Sensitivity analysis
Анализ
чувствительности

Վերլուծություն, որը բացահայտում է, թե որքանով կարող են փոխվել հետազոտության կամ *համակարգային ամփոփ տեսության* արդյունքները դրանց իրականացման մեթոդի փոփոխության դեպքում: Չգայունության վերլուծությունը կիրառում են արդյունքների կայունության գնահատման համար անորոշ որոշումների կամ ենթադրությունների նկատմամբ օգտագործված տվյալների և մեթոդների կապակցությամբ:

Չգայունություն
Sensitivity
Чувствительность

1. Սքրինինգ/ախտորոշման թեստերում հիվանդություն ունեցող անձանց ճիշտ հայտնաբերելու թեստի ունակության ցուցանիշն է: Դա թեստի միջոցով հայտնաբերված հիվանդություն ունեցող անձանց չափաբաժինն է: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ. Չգայունություն = Հիվանդների թիվ, ովքեր ունեն դրական թեստ/Հիվանդություն ունեցող բոլոր հիվանդների թիվ:

2. Գրականության փորձնական որոնման ժամանակ դա որոնման ունակության ցուցանիշն է հոդվածները ճիշտ նույնականացնելու համար: Դա բոլոր համապատասխան հոդվածների չափաբաժինն է, որոնք հայտնաբերվել են որոնման միջոցով: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ. Չգայունություն = Որոնման արդյունքում հայտնաբերված համապատասխան հոդվածների քանակ/Բոլոր հոդվածների ընդհանուր քանակ:

Չրոյական վարկած
Null hypothesis
Нулевая гипотеза

Վիճակագրական *վարկած*, որը ենթադրում է, որ մեկ *փոփոխականը* (օրինակ, նշանակված *միջամտությունը*) կապված չէ մյուսի կամ մի քանի *փոփոխականների* (օրինակ՝ մահվան) հետ, կամ՝

որ երկու և ավելի բաշխումները *սոսոկոյաճիայում* չեն տարբերվում միմյանցից: Պարզ ասած՝ զրոյական վարկածը հաստատում է, որ ուսումնասիրվող գործոնը (օրինակ՝ բուժումը) ազդեցություն չունի արդյունքի վրա (օրինակ՝ մահվան ռիսկի վրա):

Զուգահեռ խմբերով փորձարկում
Parallel group trial
Испытание с параллельными группами

Փորձարկում, որի ժամանակ համեմատում են անձանց երկու խմբեր: Դրանցից մեկում իրականացվում է ուսումնասիրվող *միջամտությունը*, իսկ մյուսում՝ ոչ, այսինքն՝ այն *վերահսկիչ խումբ* է: Զուգահեռ փորձարկումներում կարելի է համեմատել անձանց երկուսից ավելի խմբեր, ինչպես նաև տարբեր միջամտություններ՝ առանց վերահսկիչ խմբի ներառման:

Զույգերի ձևավորմամբ դիզայն
Paired design
Парный дизайн

Հետազոտություն, որի ընթացքում մասնակիցներին կամ նրանց խմբերը ընտրում և համեմատում են զույգերով (օրինակ՝ ըստ կանխորոշիչ գործոնների), ընդ որում յուրաքանչյուր զույգի մեկ անդամին բաշխում են փորձարարական (*միջամտության* խումբ), իսկ մյուսին՝ *վերահսկիչ* խմբում:

Ի

Իրադարձության առաջացման ժամկետ
Time to event
Срок наступления события

Տվյալների նկարագրությունն է այն հետազոտություններում, որոնցում վերլուծությունը կապված է ոչ միայն իրադարձությունը տեղի ունենալու փաստի հետ, այլև՝ երբ է այն տեղի ունեցել: Նման տվյալները հետազոտվում են ապրելունակության վերլուծության միջոցով:

Լ

Լայնակի հետազոտություն
 (միաժամանակյա հետազոտություն)

Հետազոտություն, որի ընթացքում դիտարկում է որոշակի *սոսոկոյաճիայում* տվյալ ժամանակահատվածում հիվանդությունների (կամ առողջության վիճակի այլ բնութագրերի) և ուսումնասիր-

Cross-sectional study
Поперечное
исследование
(одномоментное
исследование)

վող այլ *փոփոխականների* միջև փոխադարձ կապը: Լայնակի հետազոտությունը ոչ միշտ է թույլ տալիս որոշելու պատճառահետևանքային կապը ժամանակի ընթացքում:

Լոգիստիկ ռեգրեսիա
Logistic regression
Логистическая
регрессия

Լոգիստիկ ռեգրեսիան կիրառում են անկախ *փոփոխականների* բազմազանության և իրադարձության հաճախականության միջև կապն ուսումնասիրելու համար: Կարելի է օգտագործել *հասակարգված ամփոփ տեսություններում* ընդգրկված հետազոտությունների հիմնական բնութագրերի միջև փոխադարձ կապն ուսումնասիրելու համար:

Խ

Խաչաձև փորձարկում
Cross-over trial
Перекрестное
испытание

Կլինիկական փորձարկման տեսակ, որի ընթացքում համեմատում են երկու ու ավելի *միջամտություններ* և փորձարկման մասնակիցներին մի բուժման ավարտից հետո նշանակում են այլ բուժում: Օրինակ՝ A և B բուժման մեթոդները համեմատելիս փորձարկման մասնակիցներին պատահական կարգով բաշխում են երկու հավասար խմբերում: Մեկ խմբի մասնակիցներին նշանակում են բուժումը՝ A, այնուհետև B հաջորդականությամբ, մյուս խմբին՝ սկզբում B, այնուհետև A հաջորդականությամբ: Նման հետազոտության թերությունն այն է, որ բուժման առաջին տարբերակի արդյունքները կարող են ի հայտ գալ այն ժամանակահատվածում, երբ հիվանդը ստանում է բուժման երկրորդ տարբերակը:

χ (խի)-քառակուսի
չափանիշ
Chi-squared test
Критерий χ-квадрат

Ոչ պարամետրիկ վիճակագրական մեթոդ (օրինակ՝ Պիրսոնի չափանիշը), որը թույլ է տալիս գնահատել իրական (հետազոտության արդյունքում բացահայտված) ելքերի կամ ընտրանքի որակական բնութագրերի և ուսումնասիրվող խմբերում ակնկալվող *գրոյական վարկածի* ար-

դարացիության պարագայում տեսական քանակությունների միջև տարբերությունների նշանակալիությունը: Ավելի պարզ՝ մեթոդը թույլ է տալիս գնահատել երկու կամ ավելի հարաբերական ցուցանիշների (հաճախականությունների, բաժնեմասերի) միջև տարբերությունների *վիճակագրական նշանակալիությունը*:

**Խմբային
հետազոտություն
Cohort study
Когортное
исследование**

Դիտարկային հետազոտություն, որի ընթացքում առանձնացված անձանց խումբը դիտարկում են որոշակի ժամանակահատվածում և համեմատում են *ելքերը* նրանց մոտ, ովքեր ենթարկվել են կամ չեն ենթարկվել ուսումնասիրվող *միջամտության* կամ այլ գործոնի ազդեցությանը: Խմբերը կարելի է ձևավորել ներկայում՝ հետագայում դիտարկելով դրանք («concurrent cohort study» – «գուզահեռ խմբային հետազոտություն»), կամ էլ՝ առանձնացնել ըստ արխիվային փաստաթղթերի և դիտարկել դրանք մինչև ներկա պահը («historical cohort study» – «պատմական կոհորտային հետազոտություն»):

Ծ

**Ծախսերի
արդյունավետության
վերլուծություն
Cost- effectiveness
analysis
Анализ
эффективности затрат**

Տնտեսագիտական վերլուծություն, որի դեպքում արդյունքներն արտահայտում են առողջության վիճակին վերաբերող տեսակետը և գնահատում են առողջության պահպանման հարցում ձեռք բերված որոշակի լրացուցիչ օգուտը (օրինակ՝ ինսուլտի յուրաքանչյուր կանխարգելված դեպքի վրա կատարված ծախսերը):

**Ծախս-օգուտ
վերլուծություն
Cost-benefit analysis
Анализ выгоды
затрат**

Տնտեսագիտական վերլուծություն, որի դեպքում արդյունքներն արտահայտում են դրամային մույն միավորներով, ինչ ծախսերը, և համեմատում են դրանք:

**Ծախսերի
օգտակարության
վերլուծություն
Cost-utility analysis
Анализ полезности
затрат**

Տնտեսագիտական վերլուծություն, որի դեպքում արդյունքներն արտահայտում են սպառողի համար նախընտրելիության (կամ օգտակարության) միջոցով և գնահատում են ծախսերը որակի հարցում որոշ լրացուցիչ օգուտ ունենալու հիման վրա (օրինակ՝ լիարժեք կյանքի լրացուցիչ տարվա համար անհրաժեշտ ծախսերը):

Կ

**Կախյալ փոփոխական
Dependent variable
Зависимая переменная**

Արդյունք կամ պատասխան, որը ստացվում է *անկախ փոփոխականի* փոփոխության շնորհիվ: *Կլինիկական փորձարկումներում* արդյունքը (*ելքը*) կախյալ փոփոխական է, իսկ բուժման տեսակը՝ *անկախ փոփոխական*: Գծապատկերների վրա կախյալ փոփոխականը ավանդաբար ներկայացվում է ուղղահայաց առանցքի վրա: Տե՛ս նաև *Անկախ փոփոխական*:

**Կապակցման աղյուսակ
Contingency table
Таблица
сопряженности**

Տվյալների խաչաձև խմբավորում աղյուսակի տեսքով, որտեղ մեկ բնութագրի ենթադասերը տեղավորված են հորիզոնական (տողեր), իսկ մյուսի ենթադասերը՝ ուղղահայաց (սյունակներ): Թույլ է տալիս հեշտությամբ կիրառել բնութագրերի միջև կապի չափանիշները: Կապակցման պարզագույն աղյուսակը քառադաշտային է, կամ՝ 2x2, որը կիրառվում է *կլինիկական փորձարկումներում* դիտատմիկ ելքերի համեմատության համար, օրինակ՝ մահվան, *միջամտության* և *վերահսկման* խմբերում կամ *միջամտության* երկու խմբերում:

**Կատեգորիալ տվյալներ
Categorical data
Категориальные
данные**

Որակական (անվանական) տվյալներ, որոնք բաժանված են երկու կամ ավելի չհամընկնող կատեգորիաների: Օրինակ՝ սեռը (արական, իգական), ցեղը/ռասան (սպիտակ, սև, դեղին) կամ դեղերի տեսակը (ասպիրին, պարացետամոլ և այլն): Եթե կա կատեգորիաների որոշակի կարգ (օրինակ՝ չժխտողներ, նախկին ծխողներ, մոլի ծխողներ), ապա տվյալները անվանվում են հաջորդական:

Եթե առկա է ընդամենը երկու կատեգորիա, ապա տվյալները անվանվում են դիստոմիկ: Տե՛ս նաև *Դիստոմիկ տվյալներ*, *Հաջորդական տվյալներ*, *Շարունակական տվյալներ*:

Կեղծ բացասական արդյունք
False negative
Ложный отрицательный результат

Ախտորոշման թեստերում կեղծ բացասական եզրակացություն: *Կլինիկական փորձարկումներում* եզրակացություն այն մասին, որ անձը չունի հիվանդություն կամ վիճակ, այնինչ դրանք իրականում առկա են: Տե՛ս նաև *Կեղծ դրական արդյունք*:

Կեղծ դրական արդյունք
False positive
Ложный положительный результат

Ախտորոշման թեստերում կեղծ դրական եզրակացություն: *Կլինիկական փորձարկումներում* եզրակացություն այն մասին, որ անձը ունի հիվանդություն կամ վիճակ, այնինչ դրանք իրականում բացակայում են: Տե՛ս նաև *Կեղծ բացասական արդյունք*:

Կլինիկական նշանակալիություն
Clinically significant
Клиническая значимость

Արդյունք (օրինակ՝ բուժման ազդեցություն), որը բավականաչափ մեծ է, որպեսզի գործնական նշանակություն ունենա հիվանդների և բուժաշխատողների համար: Սա նույնը չէ, ինչ *վիճակագրական նշանակալիությունը*: Կլինիկական նշանակալիության գնահատումը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են բուժական ազդեցության մեծությունը, հիվանդի վիճակի ծանրությունը, կողմնակի ազդեցությունները և բուժման արժեքը: Օրինակ, եթե պզուկների բուժման նախատեսված ազդեցությունը փոքր է, բայց *վիճակագրորեն նշանակալի*, սակայն բուժումը շատ թանկ է և, բացի այդ, հիվանդներից շատերի մոտ առաջացնում է սրտխառնոց, ապա սա կլինիկական նշանակալի արդյունք չէ: Մեկ այլ օրինակ. եթե դեղը սրտի կծկումների հաճախականությունը իջեցնում է բուժելի ընթացքում 1 կծկումով, ապա դա նույնպես կլինիկական նշանակալիություն չունի:

Կլինիկական ուղեցույց
Clinical guideline
Клинические
рекомендации

Պարբերաբար մշակվող ուղեցույց բժիշկների և պացիենտների համար, որը պարունակում է բժշկական անհրաժեշտ օգնության նկարագրությունը որոշակի կլինիկական իրավիճակում:

Կլինիկական փորձարկում
Clinical trial
Клиническое
испытание

Գեոորայքի կամ այլ *միջամտության* փորձարկում դրա *արդյունավետության* և *անվտանգության* գնահատման նպատակով: Այդ ընդհանուր տերմինը ներառում է չվերահսկվող *կլինիկական փորձարկումները*, *վերահսկվող կլինիկական փորձարկումները* և *պատահական բաշխմամբ վերահսկվող կլինիկական փորձարկումները*:

Կոնֆաունդեր
(միջամտող,
խեղաթյուրող գործոն)
Confounder
Конфаундер
(вмешивающий,
искажающий фактор)

Գործոն, որը կապված է ինչպես *միջամտության* (ազդեցության), այնպես էլ հետաքրքրություն ներկայացնող *ելքի* հետ: Օրինակ, եթե *փորձարարական խմբի* մասնակիցները ավելի երիտասարդ են, քան *վերահսկիչ խմբի* մասնակիցները, ապա դժվար կլինի որոշել՝ խմբերից մեկում ցածր *ռիսկը միջամտության*՝ հետևանք է, թե՞ տարիքային տարբերության: Տարիքը, հետևաբար, միջամտող գործոն է (միջամտող փոփոխական մեծություն), որը խեղաթյուրում (շփոթում) է հիվանդության նկատմամբ *միջամտության* (ազդեցության) գնահատումը, քանի որ այն միաժամանակ ունի պատճառահետևանքային կապ տվյալ հիվանդության հետ և վիճակագրական կապ՝ հիմնական (*միջամտություն*, ազդեցություն) գործոնի հետ: Այս երևույթը կոչվում է *խեղաթյուրում*:

Կոնֆաունդինգ
(խեղաթյուրում)
Confounding
Конфаундинг
(искажение)

Իրավիճակ, երբ *միջամտության* կամ ներգործության արդյունքի գնահատականը խեղաթյուրվում է այլ գործոնի կամ գործոնների հետ կապի հետևանքով, որոնք ազդում են հետազոտվող *ելքի* վրա:

Կողմնակի ազդեցություն
Side effect
Побочный эффект

Միջամտության ցանկացած չնախատեսված ազդեցություն: Կողմնակի ազդեցությունները առավել հաճախ դեղագործական արտադրանքի ազ-

դեցության արդյունք են, որոնք այս դեպքում կապված են թերապևտիկ դեղաչափերով օգտագործվող դեղերի դեղաբանական հատկությունների հետ:

**Կուտակային
մետալերլուծություն**
**Cumulative meta-
analysis**
**Кумулятивный
мета-анализ**

Մետալերլուծություն, որում ներառվում են հետազոտություններ առանձին-առանձին՝ որոշակի կարգով (օրինակ, ըստ հետազոտության հրատարակման ամսաթվի կամ որակի), այնուհետև դրանց արդյունքները գումարվում են:

Կույր մեթոդ (քողարկում)
Blinding (masking)
Слепой метод
(маскирование)

Հետազոտության մասնակիցների խմբային պատկանելության գաղտնիության պահպանումը (օրինակ՝ *միջամտության* կամ *վերահսկման* խմբին) հենց իրենցից՝ մասնակիցներից և կամ հետազոտողներից: Կույր մեթոդի կիրառումը թույլ չի տալիս իմանալ՝ որ խմբին է պատկանում հիվանդը, և ազդել բուժման նկատմամբ հիվանդի օրգանիզմի ռեակցիայի, ինչպես նաև բուժող անձնակազմի վարքագծի վրա (*համակարգային սխալ՝ կապված հետազոտության ընթացքի հետ*) կամ էլ դրա ելքի գնահատականի վրա (*համակարգային սխալ՝ հետազոտության ելքի բացահայտման առումով*): Կույր մեթոդը ոչ միշտ է կիրառելի գործնականում (օրինակ՝ բուժման վիրաբուժական և դեղորայքային միջոցները համեմատելիս):

Կույր մեթոդի նշանակությունը որոշվում է այնքանով, որքանով օբյեկտիվ է համարվում ելքի չափանիշը: Այն ավելի կարևոր է *ելքի* նվազ օբյեկտիվ չափանիշների օգտագործման ժամանակ, ինչպիսին է ցավը կամ կյանքի որակը: Տե՛ս նաև *Պարզ կույր մեթոդ*, *Կրկնակի կույր մեթոդ*, *Եռակի կույր մեթոդ*:

Կրկնակի կույր մեթոդ
(կրկնակի քողարկում)
Double blind
(double masked)

Ո՛չ փորձարկման մասնակիցները, ո՛չ էլ ելքը գնահատող հետազոտողները տեղյակ չեն, թե ինչ *միջամտություն* է իրականացվում: Տեղեկատվությունը թաքցնելը նրանցից, որոնց բուժում են, և

Двойной слепой метод
(двойное маскирование)

նրանցից, ովքեր անմիջականորեն իրականացնում են բուժումը, նպատակ ունի խուսափել *հեղափոխության ընթացքում համակարգային սխալից*: Տե՛ս նաև *Կույր մեթոդ*, *Պարզ կույր մեթոդ*, *Եռակի կույր մեթոդ*:

Հ

Համակարգային սխալ
(շեղում,
կանխակալություն)
Bias (systematic error)
Систематическая
ошибка (смещение,
предвзятость)

Համակարգային սխալ (շեղում) կամ շեղում արդյունքներում կամ եզրահանգումներում: Բժշկական օգնության արդյունավետության հետազոտություններում համակարգային սխալը կարող է պայմանավորված լինել համեմատվող խմբերում համակարգային տարբերություններով (համակարգային սխալ՝ կապված մասնակիցների հավաքագրման հետ), հիվանդների խնամքով կամ ինչ-որ գործոնների ազդեցությամբ՝ բացի ուսումնասիրվող միջամտությունից (համակարգային սխալ՝ կապված հետազոտության ընթացքի հետ), հետազոտությունից մասնակիցների դուրս գալով (համակարգային սխալ՝ կապված մասնակիցների մաղման հետ), ինչպես նաև ելքերի բացահայտման մեթոդով (համակարգային սխալ կապված ելքի բացահայտման հետ):

Համակարգային սխալ՝
կապված ելքի բացա-
հայտման հետ
Detection bias
Систематическая
ошибка, связанная с
выявлением исхода

Համեմատվող խմբերի միջև համակարգային տարբերություններ, որոնք պայմանավորված են *ելքերի* բացահայտման, ախտորոշման և տարբերակման միջոցներով:

Համակարգային սխալ՝
կապված հաշվետվու-
թյան հետ
Reporting bias
Систематическая
ошибка, связанная с
отчетностью

Հետազոտության մասին հաշվետվության հրապարակումը կարող է կախված լինել հետազոտության արդյունքների բնույթից և ուղղվածությունից: Հետազոտությունների մասին հաշվետվությունները, որոնցում *միջամտությունը* արդյունավետ չի համարվում, երբեմն չեն հրապարակվում: Այդ պատճառով *համակարգված ամփոփ փետու-*

թյունները, որոնք չեն ընդգրկում չիրապարակված հետազոտություններ, կարող են գերազնահատել (կամ թերազնահատել) միջամտության իրական արժեքը: Բացի այդ, հրապարակված հաշվետվությունը կարող է պարունակել կողմնակալ արդյունքներ (օրինակ՝ միայն արդյունքներ, որոնք ցույց են տալիս վիճակագրորեն նշանակալի տարբերություն):

**Համակարգային սխալ կապված հետազոտության ընթացքի հետ
Performance bias
Систематическая ошибка, связанная с ходом исследования**

Ուսումնասիրվող *միջամտությանը* զուգահեռ իրականացվող բուժման մեջ համակարգային տարբերությունները: Օրինակ, եթե հիվանդները տեղյակ են, որ դասվում են *վերահսկիչ խմբին*, ապա հաճախակի կարող են կիրառվել բուժման այլ միջոցներ, կամ հիվանդների մոտ, ովքեր գիտեն, որ իրենք փորձարարական խմբում են (*միջամտության* խմբում) ավելի հաճախ կարող է դիտվել *սլացերո* արդյունք: Բացի դրանից՝ բժշկի վերաբերմունքը հիվանդների նկատմամբ կարող է լինել տարբեր՝ կախված այն հանգամանքից, թե որ խմբին են նրանք պատկանում: Հետազոտության ընթացքին առնչվող համակարգային սխալից խուսափելու համար՝ օգտագործում են *կրկնակի կույր մեթոդը*:

**Համակարգային սխալ կապված հիշողությունների հետ
Recall bias
Систематическая ошибка, связанная с воспоминаниями**

Անցած իրադարձությունների վերաբերյալ հիշողություններում սխալներից բխող կանխակալություն՝ ինչպես հիշողության խափանման, այնպես էլ այն պատճառով, որ մենք հիշում ենք «հետին թվով», և հնարավոր է՝ այժմ փոխել ենք մեր հայացքները: Հետևաբար, մարդկանց հաղորդումներն այն մասին, թե ինչ է կատարվում իրենց հետ ներկայումս կարող են ավելի ճշգրիտ լինել, քան երկու տարի առաջ տեղի ունեցածի և այն ժամանակվա իրենց զգացածի մասին հիշողությունները: Այս միտվածությունը սպառնալիք է դառնում *հետահայաց հետազոտությունների հավաստիության* մասին եզրակացություն կազմելու համար:

**Համակարգային սխալ՝
կապված
հրապարակման հետ
Publication bias
Систематическая
ошибка, связанная с
публикацией**

Կողմնակալության տեսակ, որն առաջանում է հետազոտության մասին գեկույցների հրապարակելիս: Հրապարակված տվյալների գնահատման կանխակալությունն առաջանում է այն ժամանակ, երբ հրատարակման որոշման վրա ազդում են հետազոտության արդյունքների բնույթը և ուղղվածությունը: Եթե *միջամտությունը* չի ճանաչվում արդյունավետ, ապա դրա արդյունքները ոչ միշտ են հրապարակվում: Քանի որ չհրապարակված հետազոտությունները հնարավոր չէ ներառել *համակարգված ամփոփ տեսությունների* մեջ, ապա վերջինները կարող են գերազնահատել *միջամտության* իրական արդյունքը:

**Համակարգային սխալ՝
կապված մասնակիցների
հավաքագրման հետ
Selection bias
Систематическая
ошибка, связанная с
отбором**

Բժշկական *միջամտությունների* հետազոտության *հավասարիությունը* գնահատելիս, հավաքագրման հետ կապված համակարգային սխալ ասելով հասկանում են համեմատվող խմբերի միջև համակարգային տարբերությունները՝ ըստ կանխորոշման և օրգանիզմի բուժման նկատմամբ ռեակցիայի: *Պատահական բաշխումը* և փորձարկման մասնակիցների *բաշխման բողոքկոմիտե* խմբերում պաշտպանում են հավաքագրման հետ կապված համակարգային սխալից: Փորձարկման մասնակիցների բաշխման այլ եղանակները՝ ով պետք է ստանա միջամտություն, և ով չպետք է ստանա, ավելի հակված են համակարգային սխալի, քանի որ բուժման ընտրության վերաբերյալ որոշումը կարող է պայմանավորված լինել կանխորոշման և օրգանիզմի բուժման նկատմամբ ռեակցիայով:

1. «Համակարգային սխալ՝ կապված մասնակիցների հավաքագրման հետ» տերմինը երբեմն օգտագործվում է այն համակարգային սխալը նկարագրելու համար, որը ծագում է ամփոփ տեսությունների համար հետազոտություններ ընտրելիս: Համակարգային սխալի այդպիսի օրինակ է

համակարգային սխալը՝ կապված հրապարակման հետ:

2. «Համակարգային սխալ՝ կապված մասնակիցների հավաքագրման հետ» տերմինը երբեմն սխալմամբ օգտագործում են՝ ընդգծելու բնութագրերի համակարգային տարբերությունները նրանց միջև, ովքեր ընտրված են կամ ընտրված չեն հետազոտության համար: Այդ տարբերությունները կարող են ազդել հետազոտության արդյունքների ընդհանրացման վրա, սակայն չեն անդրադառնում դրանց *հավաստիության* վրա:

**Համակարգային սխալ՝
կապված մասնակիցների
մաղման հետ**
Attrition bias
**Систематическая
ошибка, связанная с
отсевом**

Համեմատվող խմբերի միջև համակարգային տարբերությունները, որոնք կապված են հետազոտությունից մասնակիցների դուրս գալու հետ: Օրինակ՝ հիվանդները կարող են դուրս մնալ հետազոտությունից միջամտության կողմնակի արդյունքների առաջացման պատճառով: Վերլուծությունից այդ հիվանդների դուրս մնալը կարող է հանգեցնել միջամտության արդյունավետության գերազնահատմանը:

**Համակարգված ամփոփ
տեսություն**
Systematic review
**Систематический
обзор**

Ամփոփ տեսություն, որում հստակ ձևակերպված է հարցը, իսկ կազմելու համար կիրառվել են ամփոփ տեսության թեմային վերաբերող հետազոտությունը փնտրելու, ընտրելու և քննադատորեն գնահատելու համակարգված եղանակներ: Հետազոտության ամփոփ տեսության մեջ ներառված արդյունքներին ամփոփել և վերլուծել կարելի է վիճակագրական մեթոդների կիրառմամբ (*մեթոդականություն*) կամ առանց դրանց:

**Համամասնական
ռիսկերի մոդել
(Կոկսի մոդել)**
**Proportional hazards
model (Cox model)**
**Модель
пропорциональных
рисков (модель Кокса)**

Արդյունականության վերլուծության ժամանակ օգտագործվող վիճակագրական մոդել, որում հետազոտվող գործոնների (օրինակ՝ ուսումնասիրվող *միջամտության*) ազդեցությունը *ելքի* հաճախականության վրա (մահվան առաջացման *ռիսկը*) ուսումնասիրվող *ստատիստիկայում* դիտարկվում է որպես մուլտիպլիկատիվ և ժամանակի ընթացքում չփոփոխվող:

**Համասեռություն
Homogeneity
Однородность**

Համակարգված ամփոփ տեսություններում համասեռություն ասելով հասկանում են, թե տեսություններում ընդգրկված հետազոտությունների արդյունքները որքանով են միատեսակ: «Կլինիկական համասեռություն» նշանակում է, որ ամփոփ տեսության մեջ ընդգրկված փորձարկման մասնակիցների բնութագրերը և միջամտությունների ելքի գնահատականները միատեսակ կան համատեղելի են: Հետազոտությունները համարվում են «վիճակագրորեն համասեռ», եթե արդյունքների տարբերությունները չեն գերազանցում այն տարբերությունները, որոնք կարող էին առաջանալ պատահականորեն: Տե՛ս նաև *Անհամասեռություն*:

**Հաջորդական տվյալներ
Ordinal data
Порядковые данные**

Տվյալներ, որոնք դասակարգվում են երկուսից ավելի կատեգորիաների և ունեն հաջորդական կարգ: Օրինակ՝ չծխողներ, նախկին ծխողներ, թեթև ծխողներ և մոլի ծխողներ: Հաջորդական տվյալները հաճախ ներկայացվում են երկու կատեգորիաներով՝ վերլուծության և պարզեցման համար, ինչը կարող է հանգեցնել տեղեկատվության զգալի մասի կորստի: Տե՛ս նաև *Դիխոտոմիկ տվյալներ*, *Կատեգորիկ տվյալներ*, *Շարունակական տվյալներ*:

**Հաջորդական փորձարկում
Sequential trial
Последовательное испытание**

Պարահսկական բաշխմամբ վերահսկվող կլինիկական փորձարկում, որի ընթացքում տվյալների վերլուծությունը իրականացվում է յուրաքանչյուր հաջորդ հիվանդի արդյունքները անմիջապես ստանալուց հետո: Այդպիսի փորձարկումը շարունակվում է մինչև այն պահը, քանի դեռ համեմատվող խմբերից մեկում չի գրանցվել ակնհայտ օգուտ, կամ քանի դեռ չի պարզվել, որ որևէ տարբերություն գտնել չի հաջողվի:

**Հաստատագրված արդյունքով մոդել
Fixed-effect model**

Վիճակագրական մոդել, որտեղ դիտարկման միավորները (օրինակ՝ *կլինիկական փորձարկման* մասնակիցները կամ *մեդիկալ ինտերվյուստների*

**Модель с
фиксированным
эффектом**

ժամանակ առանձին հետազոտությունները) ուսումնասիրման առարկա են՝ այդպիսով կազմելով միավորների ամբողջություն: Հաստատագրված արդյունքով մոդել օգտագործելիս համարվում է, որ *մեդիկալ տրիտմենտի արդյունքների* անորոշության (որն արտացոլում է *վարահեղիության միջակայքը*) վրա ազդում է *դիսպոզիցիան* միայն թե հետազոտության ներսում: Տարբեր հետազոտություններում արդյունքի գնահատականների միջև *դիսպոզիցիան (անհամասեռությունը)* չի ազդում այդ մոդելում *վարահղության միջակայքերի* վրա: Տե՛ս նաև *Պարահական արդյունքներով մոդել*:

**Հավանականություն
Probability
Вероятность**

Որոշակի իրադարձության առաջացման հնարավորություն կամ *ռիսկ*: Տե՛ս նաև *Շանսեր, Ռիսկ*:

**Հավանականությունների բաշխում
Probability distribution
Распределение
вероятностей**

Հավանականությունների բաշխումը ցույց է տալիս պատահական *փոփոխականի* բոլոր հնարավոր արժեքների *հավանականությունը*: Օրինակ՝ *քինոմիալ բաշխում, նորմալ բաշխում և Պուասոնի բաշխում*: Տե՛ս նաև *Հավանականություն*:

**Հարաբերական ռիսկ
(ռիսկերի
հարաբերակցություն)
Relative risk (risk ratio)
(RR)
Относительный риск
(отношение рисков)
(OR)**

Միջամտության խմբի *ռիսկի* հարաբերակցությունն է *վերահսկիչ* խմբի *ռիսկի* նկատմամբ: *Ռիսկը* (մասնաբաժին, հավանականություն կամ տոկոս) որևէ խմբի, որում դիտվել է տվյալ իրադարձությունը, անձանց թվի հարաբերակցությունն է խմբի ընդհանուր թվաքանակի նկատմամբ: Եթե հարաբերական ռիսկը հավասար է մեկի, դա վկայում է համեմատվող խմբերի միջև տարբերությունների բացակայության մասին: Անցանկալի ելքերի համար մեկից փոքր հարաբերական ռիսկը վկայում է այն մասին, որ այդ *եղքի ռիսկի* իջեցմանն ուղղված միջամտությունն արդյունավետ է:

Փորձարարական և վերահսկիչ խմբերի միջև

պարզ համեմատության դեպքում.

1. Եթե Հարաբերական ռիսկը=1, նշանակում է, որ երկու խմբերի միջև *ռիսկերի* տարբերություն չկա:

2. Եթե Հարաբերական ռիսկը <1, նշանակում է, որ *փորձարարական խմբում* իրադարձությունը զարգանում է ավելի հազվադեպ, քան վերահսկիչ խմբում:

3. Եթե Հարաբերական ռիսկը >1, նշանակում է, որ *փորձարարական խմբում* իրադարձությունը զարգանում է ավելի հաճախ, քան *վերահսկիչ խմբում*:

Հարաբերական ռիսկի նվազեցում
Relative risk reduction
Снижение
относительного риска

Բուժման մեկ խմբում *ռիսկի* համամասնական նվազեցում մեկ այլ բուժման խմբի համեմատ: Դա մեկ միավորն է՝ հանած հարաբերական ռիսկի մեծությունը: Եթե հարաբերական ռիսկը 0,25 է, ապա հարաբերական ռիսկի նվազումը կլինի $1 - 0.25 = 0.75$ կամ 75 %:

Հետազոտության գործոնային դիզայն
(տեսակ, կառուցվածք)
Factorial design
Факторный дизайн
(тип) исследования

Փորձարկումների ժամանակ մեծ մասամբ ուսումնասիրում են միայն մեկ գործոն, օրինակ՝ ինչ-որ *միջամտություն* համեմատելով այն մեկ կամ ավելի այլընտրանքային *միջամտությունների* կամ պլացեբոյի հետ: Գործոնային տեսակի 2x2 սխեմայով փորձարկում անցկացնելիս հնարավոր է գործոնների 4 հարաբերություն: Օրինակ՝ *պարահսկական բաշխմամբ վերահսկվող փորձարկման* (ՊԲՎՓ) մեջ, որը գնահատում է նիկոտինով փոխարինող բուժման և խորհրդատվական օգնության արդյունավետությունը գործոնային տեսակի 2x2 սխեմայով, համեմատվում են մասնակիցների 4 խմբեր՝ միայն փոխարինող բուժման, միայն խորհրդատվության, երկու *միջամտության* և *միջամտությունների* բացակայության պարագայում:

Հետահայաց հետազոտություն

Հետազոտություն, երբ ելքերը առաջ են գալիս մինչև հետազոտության սկիզբը: *Դեպք-վերա-*

Retrospective study
Ретроспективное
исследование

հսկում հետազոտությունները սովորաբար լինում են հետահայաց, խմբային հետազոտությունները երբեմն կարող են լինել հետահայաց, *պարահական բաշխմամբ* վերահսկվող հետազոտությունները երբեք չեն լինում հետահայաց: Տե՛ս նաև *Առաջահայաց հետազոտություն*:

Հզորություն
(վիճակագրական)
Power
Мощность
(статистическая)

Հավանականություն, որ *գրոյական վարկածը* կմերժվի, եթե իրոք այն կեղծ է: Բժշկական *միջամությունների արդյունավետության* հետազոտություններում հզորությունը երաշխիքի չափն է, որպեսզի *միջամության* անարդյունավետության մասին եզրակացությունը չլինի կեղծ բացասական, եթե իրականում այն արդյունավետ է: Հետազոտության հզորությունը սահմանվում է ընտրանքի չափով (մասնակիցների քանակով), իրադարձությունների թվով (օրինակ՝ ինսուլտների) կամ *էլքերի* տատանումների աստիճանով (օրինակ՝ մարմնի կշռով), արդյունքի նվազագույն չափով, ինչպես նաև՝ թե որքանով կարելի է խուսափել կեղծ դրական եզրակացությունից: Եթե, օրինակ, *կլինիկական փորձարկումն* ունի 0.80 (80%) հզորություն, և ենթադրվում է, որ բուժման որոշակի ազդեցությունն առկա է, ապա այս փորձարկումը 100 անգամ կրկնելու դեպքում բուժման *վիճակագրորեն նշանակալի* արդյունքը կբացահայտվի 80 հոգու մոտ: Կատարյալ տարբերակն այն կլինի, որ փորձարկումը (թեստը) ունենա առավելագույնին մոտ հզորություն (100%):

Հիվանդացություն
(ինցիդենս)
Incidence
Заболеемость
(инцидент)

Պոպուլյացիայի շրջանում նոր դեպքերի քանակը որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝ երկրում հիվանդության նոր դեպքերի քանակը մեկ տարվա ընթացքում: Տե՛ս նաև *Տարածվածություն*:

Հիվանդների թիվը, որոնց անհրաժեշտ է բուժել
Number needed to treat

Հիվանդների թիվը, որոնց անհրաժեշտ է բուժել որոշակի մեթոդով որոշակի ժամանակահատվածում, որպեսզի ստացվի բարենպաստ *էլք* կամ

**Число больных,
которых необходимо
лечить**

**Հուսալիություն
Reliability
Надежность**

կանխարգելվի *անբարենպաստ ելքը* մեկ հիվան-
դի մոտ:

Չափման ընթացակարգով ստացված արդյունք-
ների վերարտադրման աստիճան: Յաճր վերար-
տադրելիության պատճառ կարող են լինել ինչ-
պես տարբեր հետազոտողների կողմից կամ
տարբեր չափիչ գործիքների կիրառմամբ ստաց-
ված գնահատման տարբերությունները, այնպես
էլ գնահատված հատկանիշի փոփոխականու-
թյունը:

Ձ

**Չափարձև
գծապատկեր
Funnel plot
Воронкообразный
график**

Հետազոտության *ճշգրտության* չափման գծա-
գրապատկերային ցուցադրություն, որը կարող է
օգտագործվել՝ որոշելու, թե կա՞րողյոք որևէ
կապ հետազոտության ծավալի և բուժման ազդե-
ցության միջև: Դիտարկվող կապի հնարավոր
պատճառներից մեկը *հաշվելիությանը վերաբե-
րող համակարգային սխալն է*: Տե՛ս նաև *Համա-
կարգային սխալ՝ կապված հաշվելիության հետ*:

Ճ

**Ճշգրտություն
Precision
Точность**

1. *Պարահական սխալների* առկայության
ճշմարտանմանության չափը հետազոտության
արդյունքներում և *մեկրավերլուծության* մեջ: *Մե-
կրավերլուծության* դեպքում *ճշգրտության* չա-
փերն են *վարահեղիության միջակայքերը* յուրա-
քանչյուր հետազոտության արդյունքի գնահատ-
ման համար, ինչպես նաև յուրաքանչյուր հետա-
զոտության արդյունքների կշիռը (արդյունքի գնա-
հատման դիսպերսիայի հետադարձ մեծություն):
Օրինակ՝ յուրաքանչյուր հետազոտության ազդե-
ցության աստիճանը արդյունքի ընդհանուր գնա-
հատականի վրա *մեկրավերլուծության* մեջ որոշ-
վում է տվյալ հետազոտության մեջ արդյունքի
գնահատման հստակությամբ:

2. Տվյալ հարցի վերաբերյալ հրապարակումներին հղումների քանակը, որոնք գտված են փնտրման հատուկ ռազմավարության միջոցով: Օրինակ՝ տվյալ հարցի վերաբերյալ հրապարակումների քանակը (փորձարկումների գրանցամատյան կամ *ամփոփ տեսություն*՝ ներառման չափանիշներին համապատասխան)՝ բաժանած գտնված հղումների ընդհանուր քանակի վրա:

Մ

Մակարդակ
Rate
Уровень

Իրադարձության առաջացման արագությունն է կամ հաճախությունը: Սովորաբար արտահայտվում է ժամանակին հարաբերված: Օրինակ՝ մահացության մակարդակը կարող է արտահայտվել մահվան դեպքերի տարեկան թվով՝ 100 000 բնակչի հաշվով:

Մաղում (մասնակիցների դուրս գալը)
Attrition
Отсев (выбывание участников)

Մասնակիցների դուրս մնալը կամ բացառումը հետազոտությունից:

Մաքրման ժամանակահատված/փուլ (համման ժամանակահատված)
Washout period/phase
Период/фаза
вымывания (период отмены)

Խաչաչև փորձարկման փուլ, երբ մեկ բուժումը հանվում է մյուս բուժման նշանակումից առաջ: Դադարեցման փուլերի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ առաջին *միջամտությունը* դադարից հետո կարող է ազդել *հլքի* վրա որոշ ժամանակ անց: Մինչ փորձարկման սկիզբը ներածական շրջանը նույնպես անվանում են մաքրման փուլ, եթե ընդհատված է եղել որևիցե բուժում, որը հիվանդը ստացել է նախքան փորձարկման ենթարկվելը:

Մետառեգրեսիա
Meta-regression
Мета регрессия

Բազմաչափ *գերվերլուծության* եղանակներ (օրինակ՝ *լոգիստիկ ռեգրեսիա*), որոնք օգտագործում են *համակարգված ամփոփ տեսությունում* հետազոտության բնութագրերի միջև կապը (օրինակ՝ փորձարկման մասնակիցներին խմբերում

բաշխման քողարկումը, ելքային ռիսկը, միջամտության ժամանակը) և հետազոտության արդյունքների (արդյունքի մեծությունը, որը դիտարկել են յուրաքանչյուր հետազոտության ժամանակ) ուսումնասիրելու համար:

Մետավերլուծություն
Meta-analysis
Мета-анализ

Համակարգված ամփոփ տեսությունները մշակելիս վիճակագրական մեթոդների կիրառություն, որի նպատակն է միավորել ամփոփ տեսության մեջ ընդգրկված հետազոտությունների արդյունքները: Մետավերլուծություն են կոչվում նաև համակարգված ամփոփ տեսությունները, որոնցում օգտագործվում են այդ վիճակագրական մեթոդները:

Միջամտության խումբ
Intervention group
Группа вмешательства

Հետազոտության մասնակիցների խումբ, որոնք ենթարկվել են բժշկական որոշակի միջամտության: Չուզահեռ խմբերով փորձարկումներում (խմբային փորձարկումներում) ներառվում են առնվազն երկու միջամտության խմբեր:

Միջամտություն
Intervention
Вмешательство

Փորձարարական հետազոտության մեջ մարդկանց, խմբերի կամ առարկաների վրա միջամտության գործընթացը: Վերահսկվող փորձարկումներում այս տերմինը երբեմն օգտագործվում է համեմատության բոլոր խմբերի, այդ թվում նաև պլացեբոյի և առանց բուժման խմբերի համար՝ միջամտելու/չմիջամտելու տեսակները նկարագրելու նպատակով:

Միջանկյալ վերլուծություն
Interim analysis
Промежуточный анализ

Վերլուծություն, որի ժամանակ միջամտության խմբերը համեմատվում են նախքան հետազոտության պաշտոնական ավարտը (սովորաբար՝ նախքան մասնակիցների ներգրավման ավարտը): Հետազոտությունը կարող է դադարեցվել, եթե մասնակիցները ենթարկվում են անհիմն ռիսկի: Միջանկյալ վերլուծությունների ժամանակն ու հաճախականությունը պետք է նշվեն հետազոտության արձանագրության մեջ:

Միջին մեծություն
Mean
Среднее значение

**Միջինների
ստանդարտացված
տարբերություն**
**Standardised mean
difference**
**Стандартизованная
разность средних**

Միջնարժեք
Median
Медиана

**Ներածական
(նախնական)
փորձարկում**
Run-in period
Вводный период

**Ներքին
վավերականություն**
(հավաստիություն,
հուսալիություն)
Internal validity
**Внутренняя
валидность**

Միջին արժեք, որը հաշվարկվում է՝ գումարելով և բաժանելով բոլոր դիտարկումների տվյալները դիտարկումների թվին:

Երկու միջինների միջև տարբերությունը՝ բաժանած ներխմբային *սրանդարտ շեղման* գնահատականի մեծության վրա: Եթե ելքը (օրինակ՝ ցավը) տարբեր հետազոտություններում գնահատում են ոչ միատեսակ միջոցներով (տարբեր սանդղակների օգտագործմամբ), ապա հնարավոր չէ կատարել ուղիղ համեմատություն կամ միավորել հետազոտության արդյունքները *համակարգված ամփոփ տեսության* մեջ: Արտահայտելով արդյունքները ստանդարտացված մեծության միջոցով՝ կարելի է միավորել արդյունքները:

Միջնարժեքն այն թիվն է, որի ըստ մեծության դասակարգված ընտրանքի տարրերի կեսը դրանից ավելի մեծ է, իսկ մյուս կեսը ավելի փոքր է:

Ն

Նախքան փորձարկումը ընկած ժամանակաշրջանն է, երբ հիվանդը դեռևս բուժում չի ստանում: Այս փուլում կարելի է բացահայտել փորձարկմանը չհամապատասխանող կամ նախանշված կարգին չհետևող մասնակիցներին, համոզվել, որ մասնակիցների առողջական վիճակը կայուն է, ինչպես նաև գնահատել նրանց ելակետային վիճակը: Ներածական շրջանը երբեմն անվանում են նաև *մաքրման փուլ*, երբ դադարեցվում է հիվանդի որևէ բուժում նախքան փորձարկմանը մասնակցելը:

Հետազոտության դիզայնի և ընթացակարգի՝ կողմնակալությունը կանխելու չափը: Որակի փոփոխությունները կարող են բացատրվել համակարգված ամփոփ տեսության մեջ ներառված հետազոտությունների արդյունքների տարբերություններով: Ավելի մանրակրկիտ նախագծված

(достоверность,
надежность)

**Նկարագրական
(կոհորտային)
հետազոտություն
Cohort study
Обсервационное
«когортное»
исследование**

**Նորմալ բաշխում
Normal distribution
Нормальное
распределение**

**Նվազեցում
Minimisation
Минимизация**

(ավելի որակյալ) փորձարկումները հավանաբար կտան արդյունքներ, որոնք ավելի ճշմարտանման կլինեն: Տե՛ս նաև *Արտաքին վավերականություն*:

Հետազոտություն, որի ընթացքում նկարագրվում են ընտրանքի մասնակիցների բնութագրերը: Ի տարբերություն *փորձարարականի*՝ նկարագրական հետազոտության մեջ հետազոտողները *վարկածը* ստուգելու համար չեն միջամտում, այլ պարզապես նկարագրում են բնակչության որոշակի խմբից կազմված ընտրանքի մասնակիցների առողջության վիճակը կամ բնութագրերը:

Հայտնի հատկություններով վիճակագրական բաշխումն է, որը սովորաբար օգտագործվում է շարունակական տվյալների վերլուծության համար: Նման վերլուծության հիմնական ենթադրություններն այն են, որ տվյալները բաշխվում են հավասարաչափորեն՝ միջինի համեմատ, և բաշխման տեսակը կարելի է նկարագրել՝ օգտագործելով միջին մեծությունը և ստանդարտ շեղումը:

Բաշխման մեթոդ, որն օգտագործվում է համեմատության խմբերի ձևավորման համար, որոնք շատ նման են մի քանի փոփոխականներով: Միայն առաջին պացիենտին են պատահական բաշխում այս կամ այն խմբին, իսկ բոլոր հաջորդներին բաշխում են այնպես, որ նվազագույնի հասցվի այդ պահին առկա անհամասեռությունը: Նվազեցումը *պարահական բաշխման* միակ ընդունելի այլընտրանքն է: Նվազեցումը լավագույնս կատարվում է կենտրոնական համակարգչային ծրագրի միջոցով, որպեսզի ապահովվի խմբերում մասնակիցների *բաշխման քողարկումը*:

Ը

**Շանսերի
հարաբերության
լոգարիթմ
Log-odds ratio
Логарифм отношения
шансов**

Շանսերի հարաբերության բնական լոգարիթմ: Կիրառում են *համակարգված ամփոփ տեսություններում* վիճակագրական հաշվարկների դեպքում և *շանսերի հարաբերությունը* գծապատկերային ներկայացնելու համար:

**Շանսեր
(հնարավորություններ)
Odds
Шансы**

Շանսը որևէ խմբի, որում տեղի է ունեցել տվյալ իրադարձությունը, անձանց թվաքանակի հարաբերությունն է այն անձանց թվաքանակի նկատմամբ, որոնց մոտ տվյալ իրադարձությունը ի հայտ չի եկել: Այսպես, եթե 100 մարդկանցից բաղկացած խմբում դեպքի հաճախականությունը (օրինակ՝ մահը) կազմում է 0,20, դա նշանակում է, որ նրանցից 20-ի մոտ մահը ի հայտ է եկել, իսկ 80-ի մոտ՝ ոչ, և շանսը կազմում է $20/80 = 1/4$ կամ 0,25:

**Շանսերի
հարաբերություն
Odds ratio (OR)
Отношение шансов
(ОШ)**

Փորձարարական խմբում (միջամտության խմբում) իրադարձության ի հայտ գալու շանսերի հարաբերությունն է վերահսկման խմբում իրադարձության ի հայտ գալու *շանսերի* նկատմամբ: 1-ին հավասար շանսերի հարաբերությունը վկայում է համեմատվող խմբերի միջև տարբերությունների բացակայության մասին: Անցանկալի ելքերի համար 1-ից փոքր շանսերի հարաբերությունը հաստատում է միջամտության *արդյունավետությունը*, որն ուղղված է տվյալ *ելքի ռիսկի* նվազեցմանը: Դեպքի ցածր *հաճախականության* պարագայում շանսերի հարաբերությունը մոտավորապես հավասար է *հարաբերական ռիսկին*: Շանսերի հարաբերության 0-ից մինչև 1 արժեքները համապատասխանում են *ռիսկի* նվազմանը, 1-ից ավելին՝ դրա աճին: Եթե շանսերի հարաբերությունը հավասար է 1-ի, ուրեմն արդյունքը բացակայում է: Հետաքրքրող արդյունքի առկայությամբ և առանց դրա առկայության խմբերի միջև

պարզ համեմատությամբ ստացվում է.

1. Եթե Շանների հարաբերությունը $=1$, ապա համեմատվող խմբերում *ռիսկի* գործոնը հայտնաբերելու *հավանականությունը* նույնն է, այսինքն՝ գործոնը որևէ ազդեցություն չունի արդյունքի զարգացման *հավանականության* վրա:

2. Եթե Շանների հարաբերությունը >1 , ապա արդյունքի առկայությամբ խմբում *ռիսկի* գործոնը հայտնաբերելու *հավանականությունն* ավելի մեծ է, այսինքն՝ գործոնն անմիջական կապ ունի արդյունքի զարգացման *հավանականության* հետ:

3. Եթե Շանների հարաբերությունը <1 , ապա արդյունքի բացակայությամբ խմբում *ռիսկի* գործոնը հայտնաբերելու *հավանականությունը* ավելի մեծ է, այսինքն՝ գործոնը հակադարձ կապ ունի արդյունքի զարգացման *հավանականության* հետ: Տե՛ս նաև *Շաններ*:

Շարունակական տվյալներ
Continuous data
Непрерывные данные

Տվյալ շարքում հնարավորինս անսահմանափակ քվով հավանական արժեքներով տվյալներ: Հասակը, քաշը և արյան ճնշումը շարունակական փոփոխականների օրինակ են: Տե՛ս նաև *Դիսկրետիկ տվյալներ*, *Հաջորդական տվյալներ*, *Կատեգորիկ տվյալներ*:

Շերտավորում
Stratification
Стратификация

Շերտավորումը (լատ. stratum «շերտ» + facio «անել»), որի միջոցով պացիենտների խմբերը բաժանվում են ենթախմբերի (շերտերի), որոնք ունեն ընդհանուր բնութագիր, օրինակ՝ տարիքային խումբ, սեռ կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակ: Տարբեր շերտերը կարելի է համեմատել պարզելու՝ տարբերվո՞ւմ են արդյոք բուժման արդյունքները ենթախմբերի միջև:

Շերտավորված պատահական բաշխում
Stratified randomization
Стратифицированная

Շերտավորված պատահական բաշխումը կիրառում են խմբերում մասնակիցների հավասար քանակության ապահովման բնութագրիչներով, որոնք ենթադրաբար կարող են ազդել կանխորոշման կամ *միջամտության* նկատմամբ օրգանիզմի

рандомизация

պատասխանի վրա: Օրինակ՝ փորձարկման մեջ, որտեղ ընդգրկված են կրծքագեղձի քաղցկեղով հիվանդ կանայք, կարևոր է, որ համեմատվող խմբերից յուրաքանչյուրում լինի նախադաշտանադադարային և հետդաշտանադադարային շրջանի կանանց հավասար թվաքանակ: Դրա համար կարելի է անցկացնել *պարահական բաշխում* յուրաքանչյուր ենթախմբում առանձին-առանձին (հաճախ *պարահական բաշխում* ենթախմբերի ներսում):

Ո

Ոսկե չափորոշիչ

(չափանմուշավորման մեթոդ)

Gold standard

Золотой стандарт

(эталонный метод)

Որակ

(հետազոտության)

Quality

Качество

(исследования)

Որակի ցուցանիշ

Quality score

Показатель качества

Մեթոդ, ընթացակարգ կամ չափման գործընթաց, որը լայնորեն ընդունվում է որպես լավագույնը, որի հետ պետք է համեմատել մոր մեթոդները, մասնավորապես ախտորոշիչ թեստերի ճշգրտությունը հետազոտելիս:

Հետազոտության մեթոդաբանական ուժի վերաբերյալ անորոշ պատկերացում. սովորաբար ցույց է տալիս կողմնակալության կանխման աստիճանը:

Մեծություն, որն արտացոլում է հետազոտության *հավաստիության* (հուսալիության) աստիճանն ամբողջությամբ կամ որպես առանձին չափանիշ (օրինակ՝ փորձարկման մասնակիցների *բաշխման քողարկումը* խմբերում): Ներկայացվում է տառերով (A, B, C) կամ թվերով:

Պ

Պայմաններ

(միջամտության անցկացման)

Context

Условия (проведения вмешательства)

Պայմաններ և հանգամանքներ, որոնց առկայության դեպքում կիրառվել են *միջամտությունները*, օրինակ՝ շրջապատող միջավայրը (հիվանդանոց, տուն, արտասահման), ժամանակը (աշխատանք, հանգստյան օրեր, գիշերներ), բժշկական օգնության տեսակը (առաջնային, երկրորդային, մաս-

**Պատահական
արդյունքներով մոդել
Random-effects model
Модель со
случайными
эффектами**

նագիտացված)՝ մասնավոր, ապահովագրական, բարեգործական, պլանային կամ անհետաձգելի:

Վիճակագրական մոդել, որը *մեկրավերլուծության* արդյունքների անորոշությունը (*վատահեղիության միջակայքը*) գնահատելիս հաշվի է առնում և՛ ընտրանքի սխալը (*դիսպերսիան*) յուրաքանչյուր հետազոտության ներսում, և՛ *դիսպերսիան* դրանց միջև: Տե՛ս նաև *Հասարակագրված արդյունքով մոդել*:

**Պատահական
բաշխմամբ «N of 1»
փորձարկում
N of 1 randomised trial
Рандомизированное
испытание «N of 1»**

Մեկ անձի մասնակցությամբ *պատահական բաշխմամբ փորձարկում* այդ մասնակցի բուժման օպտիմալ եղանակը որոշելու համար: Մասնակիցը ստանում է *փորձարարական* և *վերահսկմամբ* որոշակի *միջամտություններ* (երբեմն բուժման երկու կամ ավելի տեսակներ)՝ *միջամտությունների պատահական բաշխման* կարգով:

**Պատահական
բաշխմամբ վերահսկվող
փորձարկում
Randomised controlled
trial
Рандомизированное
контролируемое
испытание (РКИ)**

Փորձարկում, որում հետազոտողները իրականացնում են ընտրված մասնակիցների *պատահական բաշխում* ըստ խմբերի (օրինակ, *միջամտության* կամ *վերահսկման*), որոնցում կիրականացվի կամ չի իրականացվի համեմատություն պահանջող մեկ կամ մի քանի *միջամտություն*: Արդյունքները գնահատվում են *միջամտության* և *վերահսկիչ* խմբերում ելքերի համեմատության եղանակով:

**Պատահական բաշխում
Random allocation
Случайное
распределение**

Մեթոդ, որը կիրառվում է փորձարկման մասնակիցներին խմբերում պատահական բաշխման հաջորդականություն ձևավորելու, օրինակ՝ պատահական թվերի հաջորդականության աղյուսակի օգնությամբ կամ պատահական թվերի հաջորդականությամբ, որը ստեղծվում է համակարգչով: Անհրաժեշտ է տարբերել պատահական բաշխումը խմբերում մասնակիցների *բաշխման քողարկումից*: Չնայած պատահական բաշխման կիրառմանը՝ գոյություն ունի *մասնակիցների հավա-*

քաղրման հետ կապված համակարգային սխալի հավանականություն, եթե չի պահպանվում փորձարկման մասնակիցների խմբերում *բաշխման բողարկումը*: Օրինակ՝ պատահական բաշխման համար կարող է օգտագործվել պատահական քվերի հաջորդականությունը ցուցակի տեսքով, բայց եթե ցուցակը մատչելի է այն անձանց համար, ովքեր իրականացնում են փորձարկման մասնակիցների ընտրությունը և նրանց բաշխումը խմբերում, ապա նրանք կամայականորեն կարող են ազդել այդ գործընթացի վրա:

**Պատահական
ընտրանք
Random sample
Случайная выборка**

Հետազոտությունների համար *պոպուլյացիայից* պատահաբար ընտրված մի խումբ մարդիկ: Միևնույն ժամանակ, պոպուլյացիայի յուրաքանչյուր անդամ ունի հետազոտությանը մասնակցելու հավասար հնարավորություններ, և պատահական ընտրության գործընթացն ինքնին պետք է ապահովի ընտրանքի ավելի մեծ ներկայացվածություն: Պատահական ընտրանքի կողմնակալությունն ավելի փոքր է, քան *պոպուլյացիայի* մի խումբ անհատների, որոնք ավելի հասանելի են հետազոտողների համար: *Պատահական բաշխմամբ փորձարկումներն* իրականացվում են բացառապես պատահական ընտրանքների վրա:

**Պատահական սխալ
(ընտրանքի սխալ)
Random error
Случайная ошибка
(ошибка выборки)**

Պատահականությամբ պայմանավորված սխալ: *Վարահեղիության միջակայքերը և P մեծությունները* արտացոլում են պատահական, բայց ոչ *համակարգային սխալները*:

**Պատճառային
ազդեցություն
Causal effect
Причинный эффект**

Երկու բնութագրերի միջև փոխհարաբերություններ, որոնք կարող են պայմանավորված լինել պատճառահետևանքային կապով, այսինքն՝ մեկ բնութագրի փոփոխությունը փոփոխություն է առաջացնում մյուսում: Պատճառը կարող է դիտարկվել վերահսկվող փորձարկումներում (օրինակ՝ միջամտությունը հանգեցնում է մահացու-

քյան նվազմանը): Սակայն պատճառահետևանքային կապը միշտ չէ, որ կարող է հայտնաբերվել դիտարկային հետազոտություններում:

**Պատմական
վերահսկում
Historical control
Исторический
контроль**

Վերահսկման խումբ, որի համար տվյալները հավաքագրվել են ավելի վաղ, քան ներկայումս ուսումնասիրվող խմբի համար: Կանխակալության մեծ ռիսկ է առկա, քանի որ որպես վերահսկման խումբ օգտագործվում է անցյալում կատարված հետազոտության համեմատության խումբը, ինչի պատճառով առաջանում են համակարգված տարբերություններ համեմատվող խմբերի միջև (տարբեր ժամանակահատվածներ, ռիսկեր, կանխատեսում, առողջապահության պայմաններ և այլն):

**Պարզ կույր մեթոդ
(պարզ քողարկում)
Single blind (single
masked)
Простой слепой метод
(простое маскирование)**

Հետազոտողը տեղյակ է՝ ինչպիսի *միջամտություն* է իրականացվում հիվանդի նկատմամբ, իսկ փորձարկվողները տեղյակ չեն: Տե՛ս նաև *Կույր մեթոդ*, *Կրկնակի կույր մեթոդ*, *Եռակի կույր մեթոդ*:

**Պետոյի մեթոդ
Peto method
Метод Пето**

Շանսերի հարաբերությունների միավորման մեթոդ, որը լայնորեն կիրառվում է *մեդիկալերություն* մեջ: Այն հատկապես կիրառվում է այն փորձարկումներում, երբ *կլբերի* առաջացման վերլուծությունը կատարվում է կախված ժամանակային միջակայքերից: Տե՛ս նաև *Հասարակագրված արդյունքով մոդել*:

**P (պե) մեծություն
P value
Величина P**

Հավանականություն, որ հետազոտության արդյունքները կամ ծայրահեղ մեծությունները պատահական բնույթի են (կարող են փոփոխվել 0-ից մինչև 1): *Հեղվերություն* դեպքում «P» մեծությունը արտացոլում է տարբերության ընդհանուր *վիճակագրական նշանակալիությունը* խմբերի միջև, որոնցում իրականացվել է *միջամտությունը* այն դեպքում, երբ «P» մեծությունը *վիճակագրական* անհամասեռության համար արտացոլում է

տարբերության *վիճակագրական նշանակալիությունը* առանձին հետազոտություններում հայտնաբերված արդյունքների միջև:

Պլացեբո
Placebo
Плацебо

Հիվանդին ոչ ակտիվ նյութի կամ ընթացակարգի նշանակում՝ դրա ազդեցությունն իրական դեղորայքի կամ այլ *միջամտության* հետ համեմատելու համար: Երբեմն հիվանդին նշանակում են պլացեբո՝ ներշնչելով նրան, որ ստանում է բուժում: *Կլինիկական փորձարկումներում* պլացեբո կիրառվում է *կույր մեթոդ* օգտագործելիս, որպեսզի մասնակիցները չիմանան, թե ինչ բուժում են ստանալու: *Կույր մեթոդի* արդյունավետությունն ապահովելու համար պլացեբոն չպետք է տարբերվի ակտիվ *միջամտությունից*:

Պոպուլյացիա
(բնակչություն)
Population
Популяция (население)

Հետազոտություններում ուսումնասիրվող մարդկանց խումբն է, որը սովորաբար կազմում են բնակչությունից փորձարարական ընտրանքներն առանձնացնելու միջոցով: Պոպուլյացիաները կարող են սահմանվել ցանկացած բնութագրերով (օրինակ՝ աշխարհագրական տեղակայում, տարիքային խումբ, հիվանդություններ): Պոպուլյացիան կարող է բաղկացած լինել որոշակի կլինիկայում հոսպիտալացված հիվանդներից կամ հատուկ հիվանդություն ունեցող հիվանդներից: Հետևաբար, կարելի է խոսել ընդհանուր պոպուլյացիայի, հիվանդանոցային պոպուլյացիայի կամ որոշ հիվանդությամբ հիվանդների պոպուլյացիայի մասին:

Պրագմատիկ փորձարկում
Pragmatic trial
Прагматическое испытание

Փորձարկում, որի նպատակն է վերահսկել առողջապահության քաղաքականությունը իրական պայմաններում, երբ բազմաթիվ պացիենտներ չեն կարող օգտվել բոլոր, ներառյալ այլընտրանքային բուժման եղանակներից: Այս փորձարկումները տարբերվում են *բացառիկական փորձարկումներից* նրանով, որ իրականացվում են իդեալական պայմաններում և ուղղված են բուժման

եղանակների՝ պացիենտի առողջության վրա ինչ-որ կերպ ազդելու ունակության որոշմանը (*արդյունավետության վերահսկում*): Տե՛ս նաև *Բացարձական փորձարկում*:

Ռ

Ռ-իսկ
Risk
Риск

Մասնակիցների մասնաբաժինը, որոնց շրջանում դիտվում է որոշ իրադարձություն: Եթե 100 մասնակիցներից 32-ի մոտ տեղի է ունենում իրադարձություն (օրինակ՝ ինսուլտ), ապա ռիսկը կազմում է 0.32: Ռ-իսկը երբեմն անվանում են իրադարձությունների հաճախականություն, իսկ *վերահսկման խմբում* վերահսկվող իրադարձությունների հաճախականություն:

Ռ-իսկերի տարբերություն (բացարձակ ռիսկի նվազում)
Risk difference (RD)
(absolute risk reduction)
Разность рисков (PP)
(снижение абсолютного риска)

Դեպքերի հաճախականության բացարձակ տարբերությունն է երկու համեմատվող խմբերի միջև: Ռ-իսկերի տարբերությունը, որը հավասար է զրոյի, վկայում է համեմատվող խմբերի միջև տարբերությունների բացակայության մասին: Ջրոյից փոքր ռիսկերի տարբերությունը վկայում է այդ ելքի ռիսկի նվազեցմանն ուղղված միջամտության արդյունավետության մասին: Օրինակ, եթե մեկ խմբում որոշակի հիվանդությամբ վարակվելու վտանգը կազմում է 15%, իսկ մյուսում՝ 10%, ապա ռիսկերի տարբերությունը հավասար է 5 տոկոսի:

Ռ-իսկի գործակից
Hazard ratio
Коэффициент риска

Ապրելունակության վերլուծության արդյունքում հաշվարկված ազդեցության չափն է: Ներկայացնում է որևէ իրադարձության զարգացման ավելի մեծ հավանականությունը: Օրինակ, եթե բուժումից հետո մահվան ռիսկի գործակիցը 0,5 է, նշանակում է, որ բուժված պացիենտների շրջանում մահացու ելքի հավանականությունը երկու անգամ պակաս է, քան այն հիվանդների, ովքեր բուժում չեն ստացել:

Ռիսկի մակարդակ
Hazard rate
Уровень риска

Իրադարձության ի հայտ գալու *հավանականությունը*՝ հաշվի առնելով, որ այն ցայժմ տեղի չի ունեցել:

Ռեգրեսիոն վերլուծություն
Regression analysis
Регрессионный анализ

Վիճակագրական մոդելավորման մեթոդ, որը կիրառվում է մեկ կամ մի քանի *անկախ փոփոխականների* ազդեցությունը *կախյալ փոփոխականի* վրա գնահատելու կամ կանխատեսելու համար: Օրինակ՝ տարիքի, սեռի և կրթական մակարդակի ազդեցությունը հիվանդության տարածվածության վրա: Ռեգրեսիայի վերլուծության տեսակներն են *լոգիստիկ ռեգրեսիան* և *մեկրառեգրեսիան*:

Ս

Ստանդարտ (միջին քառակուսային) շեղում
Standard deviation
Стандартное (среднеквадратичное) отклонение

Պատահական մեծության *դիսպերսիայի* (տարրալուծման) ցուցանիշ: Հաշվարկվում է որպես պատահական մեծության տարրալուծման քառակուսի արմատ և ցույց է տալիս ընտրանքում միջին քառակուսային շեղումը *միջին արժեքից*:

Ստանդարտ սխալ
Standard error
Стандартная ошибка

Մեծություն, որը բնութագրում է ընտրովի բաշխումը, մասնավորապես ընտրովի միջինի ստանդարտ շեղումը: Վերլուծվող ընտրանքի միջին արժեքի և պոպուլյացիայի իրական միջին արժեքի միջև հնարավոր տարբերության գնահատականն է: Ստանդարտ սխալը նվազում է ընտրանքի չափի մեծացմանը զուգահեռ:

Սուռոգատային վերջնակետեր (փոխանակ, անուղակի, միջանկյալ ելքեր)
Surrogate endpoints
(intermediary outcomes; surrogate outcomes)
Суррогатные конечные точки

Ելքերի գնահատման չափանիշներ, որոնք չունեն ուղղակի գործնական նշանակություն, սակայն արտացոլում են նշանակալի *ելքեր*: Օրինակ՝ զարկերակային ճնշման մեծությունը չունի հիվանդի համար անմիջական նշանակություն, բայց *կլինիկական փորձարկումներում* հաճախ կիրառվում է, որպես *ելքի* չափ, քանի որ ինսուլտի կամ ստենոկարդիայի նոպայի առաջացման ռիսկի գործոն է: Անուղակի ելքեր կարող են ծա-

(косвенные,
промежуточные
исходы)

ռայել ֆիզիոլոգիական կամ կենսաքիմիական ցուցանիշները, որոնք կարելի է համեմատաբար արագ և հեշտությամբ գնահատել և որոնք համարվում են հիմնական կլինիկական *եւքերի* կանխորոշիչ նշաններ:

Վ

Վարկած
Hypothesis
Гипотеза

